## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
## № ԳՀԱՊՁԲ-9/9-3 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 05-ը 06. 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ն՝** ի դեմս ընկերության տնօրեն **Հ. Ֆախրայիի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **09.04.2018թ.** կնքված **№ ԳՀԱՊՁԲ-9/9-3** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին(այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

### 2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է ***1,294,000 (մեկ միլիոն երկու հարյուր իննսունչորս հազար) ՀՀ դրամ***, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.2 կետով նախատեսված կարգով, բայց ոչ ուշ, քան 10.12.2018թ.:

### 3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անքաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:**

### 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | **«Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ** |
| ք. Երևան Բագրևանդի 5 | **ք. Երևան, Կոմիտաս 31, բն. 36** |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | **«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ** |
| Հ/Հ 900011144129 | **Հ/Հ 16047024265400** |
| ՀՎՀՀ 02522157 | **ՀՎՀՀ 01564583** |
| ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետ ՊԺԳ | **տնօրեն** |
| Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | Հ. ՖԱԽՐԱՅԻ |

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-9/9-3պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ապրանքի անվանում | Չ/Մ | Քանակ | Միավորի գինը /դրամ/ | Ընդհանուր գումար /դրամ/ | Մատակարարումը՝ 2018թ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 3-րդ եռամսյակ |
| 1. | **Վիրաբուժական գործիքներ** /Ցիրկուլյար կոր կտրող-կարող ապարատ, 33մմ/ | տուփ | 5 | 95,400 | 477,000 | 5 |
| 2. | **Վիրաբուժական գործիքներ** /Էնդոսկոպիկ ասեղնաբռնիչ/ | տուփ | 2 | 85,000 | 170,000 | 2 |
| 3. | **Վիրաբուժական գործիքներ** /Ցիրկուլյար կարող կտրող գործիք 25 մմ/ | տուփ | 3 | 159,000 | 477,000 | 3 |
| 4. | **Վիրաբուժական գործիքներ** /Գծային կարող ապարատ դանակով/ | տուփ | 1 | 85,000 | 85,000 | 1 |
| 5. | **Վիրաբուժական գործիքներ** /Գծային կարող ապարատ, դանակով/ | հավաքածու | 1 | 85,000 | 85,000 | 1 |
| **Ընդամենը՝** | | | | | **1,294,000** | |

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-9/9-3 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Հ/հ | Ապրանքի անվանում | CPV կոդ | Ընդհանուր գին/դրամ/ | Վճարումը նախատեսվում է իրականացնել 2018թ., համապատասխան ամիսների, այդ թվում | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.18թ. |
| 1. | **Վիրաբուժական գործիքներ** /Ցիրկուլյար կոր կտրող-կարող ապարատ, 33մմ/ | 33161120/407/10/5 | 477,000 | 477,000 | 477,000 | 477,000 | 477,000 | 477,000 | 477,000 |
| 2. | **Վիրաբուժական գործիքներ** /Էնդոսկոպիկ ասեղնաբռնիչ/ | 33161120/416/10/5 | 170,000 | 170,000 | 170,000 | 170,000 | 170,000 | 170,000 | 170,000 |
| 3. | **Վիրաբուժական գործիքներ** /Ցիրկուլյար կարող կտրող գործիք 25 մմ/ | 33161120/405/10/5 | 477,000 | 477,000 | 477,000 | 477,000 | 477,000 | 477,000 | 477,000 |
| 4. | **Վիրաբուժական գործիքներ** /Գծային կարող ապարատ դանակով/ | 33161120/412/10/5 | 85,000 | 85,000 | 85,000 | 85,000 | 85,000 | 85,000 | 85,000 |
| 5. | **Վիրաբուժական գործիքներ** /Գծային կարող ապարատ, դանակով/ | 33161120/447/10/5 | 85,000 | 85,000 | 85,000 | 85,000 | 85,000 | 85,000 | 85,000 |
| **Ընդամենը՝** | | | **1,294,000** | **1,294,000** | **1,294,000** | **1,294,000** | **1,294,000** | **1,294,000** | **1,294,000** |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ
տնօրեն

Հ. ՓԱԽՐԱՅԻ